

–Իմ կարծիքս ալ սա է, որ սահմանադրութենէն գոնէ մեր ածուխին ու փայտին ստակը հանենք... Բայց սահմանադրութիւնն ալ գործադրուելու է... սահմանադրութեան դէմ եղողն իմ առաջին թշնամիս է... մեղք է սահմանադրութեան, թէպէտեւ Տ... աղային ալ մեղք է:

–Ելէ՛ք, ազգային դեղարանը երթանք ու հոն լուծենք խնդիրնիս:

–Շատ աղէկ:

Տեսարանն է ազգային դեղարանին մէջ:

–Բարեւ, էֆէնտի:

–Բարեւ:

–Բարի իրիկուն:

–Աստուծու բարին:

–Բարեկամներու հետ եկանք ձեզի ճանձրութիւն տալու:

–Ձեր տալիք ճանձրութենէն շնորհակալ եմ... ո՞վ է հիւանդ մէջերնիդ:

–Թաղական խորհուրդը հիւանդ է:

–Հասկցայ... բայց մարդիկը դեռ երկու օր է, որ անցան պաշտօնի:

–Աղէկ ա՛, մինչեւ որ տապալենք նէ՛ երկու շաբթուան կ'ըլլան:

–Ի՛նչ յանցանք պիտի գտնենք, զայն տապալելու համար:

–Եղբա՛յր, նախ եւ առաջ տապալելու վրայ խորհինք, վերջը յանցանք մը կ'գտնենք հարկաւ... յանցանքներու սով չկայ, փա՛ռք Աստուծոյ:

–Գիտէք որ ես զձեզ միշտ պաշտպանած եմ, բայց այս խնդրոյն մէջ կէտ մը կայ, որուն հակառակ եմ ես:

–Ի՞նչ կէտ:

–Թաղականը յանցանք չունի դեռ. սպասեցէք քանի մը օր, որ սխալ քայլ մ'առնէ եւ ան ատեն իրաւունքով հրապարակ ելնենք:

–Պիտի համաձայնիս մեզի:

–Անկարելի է այս կէտին մէջ:

–Մեզնէ չպիտի բաժնուիս:

–Խղճիս կդպչի:

–Ռօպ տը լաֆէքթօր մը կու տա՞ս ինձի դուն:

–Գլխուս վրայ:

–Ինձ ալ շիշ մը Պօրտօյի գինի տուէք: